ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.05.2013թ.
200-ի 9

ՀՀ նախագահի աշխատակազմի
ղեկավար պարոն Վիգեն Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Շնորհակալ ենք մեր՝ 2013թ.-ի ապրիլի 18-ի 200-8 հարցմանը պատասխանելու համար: Այդ հարցմամբ խնդրել էինք հետեւյալ տեղեկությունները.

“Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 2013թ.-ի ապրիլի 4-ին տրամադրած տեղեկանքի համաձայն՝ “Երիտասարդներ երկիր առողջապահական” եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ներից յուրաքանչյուրը 2011 եւ 2012թ.թ.-ի ընթացքում ՀՀ Նախագահի աշխատակազմից ստացել է ավելի քան 27 մլն ՀՀ դրամ գումարի դրամաշնորհ (http://givemeinfo.am/hy/case/1164/): “Երիտասարդներ երկիր առողջապահական” եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ների եւ նրանց գործունեության վերաբերյալ համացանցում որեւէ տվյալ չգտանք:

1. Ի՞նչ ծրագիր իրականացնելու համար է դրամաշնորհ տրվել “Երիտասարդներ երկիր առողջապահական” եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ներից յուրաքանչյուրին,
2. Որտե՞ղ կամ ի՞նչ աղբյուրից կարող ենք ծանոթանալ այդ ՀԿ-ների գործունեությանը”:

Սակայն, ՀՀ Նախագահի աշխատակազմից ստացվել է պատասխան ոչ թե մեր հարցման մեջ նշված ՀԿ-ների, այլ ՀՀ Նախագահի աշխատակազմի գործընկեր "Զարգացում և ինտեգրացիա" ՀԿ-ի վերաբերյալ, եւ ըստ էության պատասխան չի տրվել մեր հարցմամբ ներկայացված հարցերին: Բացի այդ՝ ՀՀ Նախագահի աշխատակազմից ստացված գրության մեջ նշված կայքում այդ ՀԿ-ների իրականացրած ծրագրերի մասին որեւէ տեղեկություն տեղադրված չէր:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

Կից ներկայացնում ենք ՀՀ Նախագահի աշխատակազմից ստացված պատասխան գրության պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան